

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

X – դասարան

1. Նահապետ Քուչակը ծնվել է Վանի Խառակոնիս գյուղում, ապրել է 100-տարի, նրա մասին շատ քիչ տեղեկություններ կան: Բանաստեղծի թոռանը պատկանող ձեռագիր Ավետարանի հիշատակարանում՝ 1637 թ., գրված է եղել «Յիշեցեք զՔուչակ և կենակից Թանգիաթուն: Դարձեալ յիշեցեք Քուչակ և զմեծ պապ իւր Նահապետ վարպետն, որ մականունն Աշրղ Քուչակն ասի...»:

Ըստ ավանդություննից մեկի՝ Քուչակն իր երգերի կախարդական ուժով բուժել է թուրք սուլթանի՝ անբուժելի հիվանդությամբ տառապող կնոջը, որի համար սուլթանը Քուչակի ցանկությամբ Կոստանդնուպոլսից մինչև Խառակոնիս 7-եկեղեցի և 7-մզկիթ է կառուցել տվել: Իհարկե, մզկիթները սուլթանը կառուցել է ի հակակշիռ այն եկեղեցիների, որ խնդրել է Քուչակը:

Մի այլ ավանդությամբ Քուչակը գյուղացիներին հրավիրում է գյուղի եկեղեցու մոտ, ինքը բարձրանում է վանքի կատարը և ասում, թե ցած է նետվելու, և խնդրում է իրեն թաղել հենց ընկած տեղում: Հենց եկեղեցու պատի տակ էլ թաղում են նրան, և նրա գերեզմանը ուխտատեղի է դառնում Խառակոնիսի և շրջակա գյուղերի սիրահարների համար:

Քուչակին են վերագրվում միջնադարում ստեղծված հայրենների մեծ մասը: Այդ հայրենները գրված են սիրո, պանդխտության և խոհական թեմաներով: Առաջին անգամ մեր գրականության մեջ գովերգվում է կենդանի, զգայական սերը, առաջին անգամ մենք տեսնում ենք սիրահարին, որ հաստատում է, թե սերը պետք է լինի ազատ ու անշահախնդիր:

Նա իր սիրտը համարում է սիրո օրրան, աշխարհ գալու օրից սերն ապրում է նրա սրտում, այնուհետև նրա սրտից տարածվում է աշխարհեաշխարհ:

Նա իր սիրած էակին համարում է իր հոգին կամ իր հոգու հոգին, նրան համեմատում է աչքի լույսի հետ, երբ սեր չկա, աչքն առանց լույսի կխավարի, երբ ձուկը ջրից հանեն, նա կմեռնի: Այդպես էլ, եթե իր հոգին իրեն մերժի, ինքն էլ կմեռնի:

Սակայն սերը, որ հզոր է մահվան պես, չի մեռնում, այլ տառապանք է տալիս ու վեհացնում մարդուն:

Հայրենը 15-վանկանի տողերով քառատող ոտանավոր է՝ 7/8 բաժանումով: Կոչվում է հայրենի կարգ կամ հայերեն:

Չարենցը իր « Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ Քուչակին այսպես է բնորոշել « Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա»:

2. Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ, լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանը հայ ժողովրդի լուսավոր հանճարներից է, ով իր անձը և գործը ի

սպաս դրեց հայրենյաց փրկության՝ հաստատելով իր խորին համոզմունքը. « Չիք իմ այլ նպատակ առաջի, եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ»:

Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիրն է, Գրապայքարի անխոնջ մարտիկը, մեծ լուսավորիչ-դեմոկրատ, մեծ մանկավարժ, անգուգական պատմող: Նրա «Վերք Հայաստանի» վեպը հայ նոր գրականության հիմնաքարն է: Վեպի վերնագիրը վեպը հասկանալու լավագույն բանալին է: Ո՞րն է Հայաստանի վերքը, որ հայրենասեր որդու համար ողբ է դարձել. Պետականությունից զրկված, ուրիշի լծի տակ հեծող դրախտային երկիրը ամեն պահ ասպատակվում էր, հայ մանուկը օտարում էր մայրենին, հայ գյուղացին իր վաստակի տերը չէր, հայ աղջիկները գերեվարվում էին, ամեն ինչ օտարի ձեռքի տակ էր: Եվ հայրենասեր որդին ողբում էր, որ հայերի կյանքը, նրանց մտածելակերպը, նրանց պատմությունը, նրանց հիշողությունները՝ հրաշալի ժամանակների մասին ծանոթ չեն առաջադեմ ժողովուրդներին, նա իր առաջ նպատակ էր դրել բուժել այդ վերքը, աշխարհին ներկայացնել հինավուրց ու հերոսական մի ժողովրդի պատմությունը, ապացուցել, որ իր ժողովուրդը ևս իր հողի ու ճակատագրի տերն է: Նրա ողբը նման է Եղիշեի ողբին, այն հավատի ու արժանապատիվ հաղթանակի ողբ է:

Անմահ քանաքեռցուն անձեռակերտ հուշարձան է կանգնեցրել մի ուրիշ ողբերգական հանճար՝ Եղիշե Չարենցը: «Դեպի լյառն Մասիս»-ը ձոն է Աբովյանին, նա գնում է դեպի Մասիսը՝ այնտեղ հավերժանալու, այնտեղ գտնելու հավերժական հանգիստ: Մասիսը դառնում է նրա կենդանի հուշարձանը:

- Եվ այժմ մենավոր

Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ,

Դեպի լյառը անհաս ու վեհանիստ,-

Դեպի գագաթը բարձր, որ իր ժողովուրդը

Համարել է հավետ իր գոյության խորհուրդը,-

Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...

3. Ազատության երգիչը Միքայել Նալբանդյանն է, ով համարձակորեն երգեց ազատությունը, գնաց այդ փշոտ ճանապարհով՝ արհամարհելով « փայլակ, կայծակ, հուր, երկաթ», արհամարհելով « շատ փորձանքներ » և « մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահ ու սյուն» պիտի հավատարիմ մնա իր հավատամքին:

Նալբանդյանի կերպարին անդրադարձել են Պետրոս Դուրյանը « Տարագիր ի Միպերիա» մեկ արարվածով ողբերգությանը, Բաֆֆին՝ իր «Կայծեր» վեպում, Մեղրակ Տեր-Սարգսյանցը «Շահենն ի Միպիր» վեպում, Եղիշե Չարենցը իր «Անակնկալ հանդիպում Պետրոսավլույան ամրոցում» չափածո նովելում:

Նալբանդյանի կերպարը նախատիպ է ծառայել Բաֆֆու « Կայծեր» վեպի Համրի համար և Մեղրակ Տեր-Սարգսենցի « Շահենն ի Միպիր» վեպի Շահենի համար:

Հատվածը մեջբերված է Եղիշե Չարենցի « Անակնկալ հանդիպում Պետրոսավլույան ամրոցում» չափածո նովելից:

4. Սկյուտարի սոխակը՝ Պետրոս Դուրյանը, Պարույր Սևակի դիպուկ բնորոշմամբ՝ «Մեր քնարերգության Վահագնը», հայ գրականության երկնականմարում ստեղծեց իր Հարդագողը և այդ Հարդագողը հյուսեց բնության, ցավի, սիրո երգերից, որոնք ծնվել են իր ապրումներից: Նրա երգերը մեղմ են իրենց գույներով, օժված են քնքշությամբ, թաթախված են տառապանքով:

Դուրյանի աշխարհում լճակ կա, սիրոդ ու նվաղոդ սիրտ, անբիծ սեր ու հուզմունք: Այդ հրաշալի լճակը ալեկոծվեց, սիրոդ սիրտը ընդվզեց Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծության մեջ, որը հրաբխի նման ժայթքեց իր մահից առաջ:

Այս բանաստեղծությունը նրա երևակայության ամենաբարձր թռիչքն է, ցասումի և ընդվզման ամենաբուռն արտահայտությունը:

Բանաստեղծությունը սկսվում է հրաժեշտի և հաշտության խոսքով. Տառապած հոգին ազատվել է երկրային կապանքներից և հասել աստղերին.

Է՛հ, մնաք բարով, Աստված և արև,

Որ կը պրլպրլաք իմ հոգվույս վերև..

Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուլ երկնից..

Մա անսովոր հանդգնություն է. սովորական մի մահկանացու, ելնելով «աստղերու սանդուղքն ահալի», փորձում է վիճել Աստծու հետ: Նարեկացիական շնչով է գրված այս հրաշքը. նրա ընդվզումը տեղի է տալիս զգայացունց թախանձանքին, և նա աղերսում է կայծ տալ իրեն ապրելու համար, կրակի մի կաթիլ՝ սիրելու համար: Մակայն անարձագանք է մնում նրա թախանձանքը, աշխարհն անտարբեր է, Աստված լռում է, և բանաստեղծը հասկանում է, որ իրեն «խոստացված» կյանքը սուտ է, պոռթկում է գայրույթը՝ Աստծուն անվանելով՝ «Աստված ոխերիմ»:

Այժմեն թո՛ղ որ շանթ մը ըլլամ դակահոտ

Թող անեծք մը ըլլամ ու կողըդ խըրիմ,

Թող հորջոջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Մակայն «Տրտունջք» անհավաստի և անիծող հոռետեսի գործ չէ, այլ փշրված սրտի հետին ճիչը, որ պոռթկում է: Նրա բողոքը սկսվում է «եթե»-ով, ուրեմն պայմանական է, որովհետև հավատում է, որ պահված է իրեն «շողի, բույրի» երջանիկ մի կյանք: Մակայն մահամերձի համար չկա սփոփանք, որովհետև այդ տառապանքը նրան տվել է Արարիչը, ուրեմն «մահամերձն էլ կուգե երկու բան. Նախ՝ կյանք մը, ապա լացող մ՝ իր վրան»:

Բանաստեղծությունը կոչվում է «Տրտունջք»- տրտունջներ, քանի որ անձնական վշտի նախապատճառից այն վերաճում է տիեզերական թախծի, ամբողջ մարդկության տառապանքի ու թշվառության կարեկցանքի:

«Տրտունջքը» հեռանում է Դուրյանի հոգեբանությունից և դառնում է բացառիկ ընդվզում կյանքի, երկնքի դեմ: Իր «մխալ»-ը դառնում է «փրփրում մը դժոխքի նման», դառնում է հրաբխային ժայթքում, անեծք ու դառնություն, բայց չի վերաճում չարության: Այն իր տեսակով եզակի է նաև համաշխարհային գրականության մեջ:

Թումանյանն էլ ունի «Տրտունջ» բանաստեղծություն, բայց այն միայն մեծ հանճարի բողոքն է իր դատարկված կյանքի համար, կորցրած սիրելիների համար: Երկու հանճարների բանաստեղծությունների տարբերությունը բովանդակության ու նաև վերնագրերի մեջ է՝ «Տրտունջք», «Տրտունջ», բայց երկուսն էլ գնում են դեպի Նարեկացի՝ «Խոսք ի խորոց սրտի...»: «Տրտունջքից» մեկ օր հետո Դուրյանը գրում է «Զոջումը»՝

Ա՛հ, գլուխս փոթորկեց...

Այս սև հեղեղն տրվի դուրս...

Ո՛հ, ներե ինձ, Աստված իմ...

Բայց սա չի նշանակում, որ Դուրյանը հրաժարվել է «Տրտունջք» -ի գաղափարից . սա հոգեբանական տեղատվության արձագանք է:

Իսկ «Հարգս չգիտցան» ուղղված է իրականությանն ու մարդկանց, ովքեր անտարբեր եղան հանճարեղ պատանու նկատմամբ: Նա տպագրված չտեսավ իր հրաշալի բանաստեղծությունները: